Սիպիլ

Ծովուն հանդեպ

Ծո՛վ, կը սիրեմ ըզքեզ անհուն հուզմունքով,
Ջի պատկերն ես դուն ալեծուփ իմ հոգվույս.
Քո մըշուշներդ վարաքներս են, և քու քով
Միշտ կը գտնեմ գիշերներուս արշալույս,

Քեզի նման թավալելով քարեքար,
Հորերն ի վար, սարերն ի վեր կը վազեմ,
Խութքերու դեմ փշրելով անդադար,
Որոնելու կյանքին գաղտնիքը վրսեմ:

Նյութին տարփանքն ինձմո հեռու կուտա ծույս,
Իրերն ինչպես՝ լույծ ջուրերուդ երեսեն.
Եվ տենչանքներս փոթորկի պես մշտացույց.
Դեպի աննյութ հորիզոններ կը հասնեն:

Երևույթներդ կը վերլուծեմ մաս առ մաս,
Մոլուցքիդ մեջ ահեղ տենդեր կը կարդամ,
Եվ երբ զգվոտ հծծյուններով կը հևաս,
Լուրթ քերծվածն ես լացող սրտի մը տարտամ:

Ո՛հ, կ՚ըղձայի նետվիլ խորքիդ մեջ անծիր,
Ծուփերուդ հետ անհունին մեջ թավալիլ,
Եվ անծանոթ գաղտնիքներուդ ունկնդիր՝

Լույս հեշտանքներդ ըմպել կաթիլ առ կաթիլ:

Սուզվիլ, կարդալ, մութ խորշերուդ մեջ անցան,
Լուռ վեպերը սոսկավիթխար անդունդին,

Եվ օրորված միշտ հանկերգովը մահվան,
Սփռել զանոնք շիրիմերեն ալ անգին:

Այսպես տարված միշտ անկայուն, թափառկոտ՝
Մեր ափունքեն դեպի հեռու երկինքներ,
Դեպի ծովե ծիածաններ անոլորտ,
Դեպ՝ աստղափայլ օվկյաններ լուսահեռ:

Ծփծըփալով, փրփրալով, լողալով,
Գլտորելով փոսեր ու ալքն անհատակ,
Հավե՛տ սուրալ սարերու սայրն իբրև հով՝
Այս սըլացքի հեշտանքեն խոնջ՝ այլ անհագ:

1912